

6.ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ²²

Նախատեսված էր 2004թ. ընթացքում իրականացնել 12 վիճակագրական հետազոտություն: Ընդ որում, դրանցից 7-ը, կամ 58%-ը պետք է իրականացվեր ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ, իսկ 5-ը՝ միջազգային ծրագրերի մասնագիտական ու ֆինանսական օժանդակությամբ (3-ը՝ ՏԱՄԻՍ ծրագրով, 1-ը՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության աջակցությամբ և 1-ը՝ Շվեդական միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ):

ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորման հաշվին նախատեսված 7 վիճակագրական հետազոտություններից իրականացվել է 6-ը (նախատեսվածի 86%-ը): Այսպես.

ՀՀ պետական բյուջեով իրականացվել է.

- «Հացահատիկի բերքահավաքի որակի հետազոտություն»-ը,
- «Տնային տնտեսություններում աշխատուժի ընտրանքային հետազոտություն»-ը,
- «Մահմանամերձ և բարձր լեռնային գոտիներում տարրական կրթահամակարգում երեխաների ընդգրկվածության և չհաճախելու պատճառների հետազոտություն»-ը,
- «Մանկական խնամատարական կազմակերպություններում հանգստի կազմակերպման պայմանների հետազոտություն»-ը
- «Տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպություններում հանգստի կազմակերպման պայմանների հետազոտություն»-ը
- «Հանքային ջրերի պաշարների, արդյունահանման և օգտագործման մասին հետազոտություն»-ը:

ՀՀ պետական բյուջեով նախատեսված, բայց չիրականացված հետազոտությունը «Առևտրային փոքր կազմակերպություններում աշխատողների թվաքանակի և աշխատավարձի ընտրանքային հետազոտություն» է, որը չի իրականացվել ընտրանքի բազայի ճշգրտման պատճառով:

Անհրաժեշտ ֆինանսավորման բացակայության պատճառով չի իրականացվել Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆինանսական աջակցությամբ նախատեսված՝ ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ անցկացվող «Մահացության, ինչպես նաև մանկամահացության իրավիճակի ուսումնասիրությունը հանրապետության առանձին մարզերում» հետազոտությունը:

Իրականացվել են ՏԱՄԻՍ ծրագրով նախատեսված հետևյալ 3 վիճակագրական հետազոտությունները.

- «Գյուղատնտեսության վիճակագրություն»,
- «Աշխատուժի ընտրանքային հետազոտություն (մանկական զբաղվածություն)»,
- «Բիզնես ռեզիստր»:

²² Տես՝ Ծրագիր, Հավելված II:

Այդ հետազոտությունների արդյունքները հրատարակվել են հայերեն և անգլերեն լեզուներով հետևյալ զեկույցներում.

- 1.Գյուղատնտեսության ընտրանքային հետազոտության զեկույց,
- 2.Աշխատուժը և մանկական զբաղվածությունը Հայաստանում զեկույց,
3. Բիզնես ռեզիստրի ընտրանքային հետազոտության զեկույց:

Շվեդական միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ հրատարակվել է.

«Արդյունաբերական կազմակերպությունների շրջանում բնապահպանական ծախսերի հաշվառման ընտրանքային հետազոտություն»-ը: